№ 145 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) 1880 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) № 145

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի ոչինչ չէ աջողվում.—Ներքին տեսութիւն. Նամակ Ալէքսանդրապօլից. Նամակ Գօրիսից. Նամակ Կաղզւանից. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Արևելեան գործերը.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Վահան վարդապետ Բաստամեանցի յօդուածը.

ԻՆՉԻ ՈՉԻՆՉ ՉԷ ԱՋՈՂՎՈՒՄ

Մեր հասարակութեան մէջ ինչ գործին և ձեռք տայինք, ինչ հաստատութիւն և հիմնէինք,—գրեթէ երբէք ոչինչ չէ աջողվում։

Մեր հասարակական հաստատութիւնների մեծ մասը մի և նոյն անձների խմբի ձեռին է։

Հիմնվում է մի հաստատութիւն, մի ընկերութիւն,—գործողները նոյն մարդիկ են, որոնք գործում էին և բոլոր մնացած հիմնարկութիւնների մէջ... Ուշադրութիւն դարձրէք և կը տեսնէք, որ այս կամ այն բանկի ծառայողներ, նոյն մարդիկ են, որոնք Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան անդամներ են, նոյն մարդիկ են, որոնք թատրոնական մասնաժողովի անդամներ են, նոյն մարդիկ են, որոնք թարգմանական ընկերութեան վարչութեան անդամներ են....և այլն։

Ուր որտեղ մնում է մի յայտնի խումբ, նա իսկոյն սկսում է տեղաւորել իր կառավարութեանը յանձնված հիմնարկութեան մէջ իր բոլոր բարեկամներին և ազգականներին։

Այդպիսով մեր հասարակական բոլոր հիմնարկութիւնները իսկապէս հասարակական հիմնարկութիւններ չեն, այլ յայտնի անձերից բաղկացած գործողների մի յայտնի մասնաւոր խմբի սեփականութիւն են։ Հասարակութեան բոլոր ուժերը երբէք չեն մասնակցում մեր ազգային և հասարակական հիմնարկութիւնների մէջ, այլ նրանց մէջ մասնակցում են միշտ մի և նոյն անձինք, ինչպէս օպէրայի մէջ մի և նոյն անձինք խաղում են և պալատականների և գիւղացիների և զինուորականների դերերը... Մարդիկ նոյն են մնում, միայն փոխում են իրանց զգեստները....

Հասկանալի է այժմ թէ ինչ է պատճառը, որ մեր հասարակական և ազգային հիմնարկութիւնները միշտ անաջող են գնում։ Պատճառն այն է, որ մասնաւոր շրջանի սեփականութիւն լինելով, այդ բոլոր հաստատութիւնները զուրկ են մնում հասարակութեան բոլոր թարմ ուժերի գործակցութիւնից, ազատ են մնում հասարակութեան կօնտրօլից։

Շատ անգամ փորձ է լինում։ Հիմնվում է մի նոր հաստատութիւն, մի նոր ընկերութիւն. Նոր, թարմ, ժողովրդական ուժեր, որոնք կը կամենային նուիրել իրանց ամբողջ մտաւոր կարողութիւնը հասարակութեան ծառայութեանը, իրանց առաջարկում են ընդհանուր ժողովի քուէարկութեանը։ Բայց նրանց չեն ընտրում, սևացնում են, այլ ընտրում են դարձեալ հներին։

Այդպիսով մեր ոչ մի հասարակական գործունէութեան մէջ մեր հասարակութեան ամբողջ ուժերը երբէք չեն մասնակցում, այլ մասնակցում են միշտ մի և նոյն անձինք, որոնք պատկանում են մի նեղ շրջանին։

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչի մեզանում ոչինչ չէ աջողվում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ

14 Օգոստոսի

Երբեմն ստիպված է մարդ խօսել այնպիսի մի առարկայի վրա, որի մասին մտածելն անգամ ծիծաղելի կը լինէր.

Կարդացէք «Մեղուի» վերջին համարները, որոնց մէջ դատապարտվում է «Մշակը» որպէս յանցաւոր, որպէս վնասակար...որովհետև քարոզում է, թէ կրօնը և ազգութիւնը տարբեր գաղափարներ են, թէ այդ երկու գաղափարները պէտք չէ շփոթել միմեանց հետ,—քարոզում է, որ հայերը առանց կրօնի խտրութեան պէտք է եղբայրանան մի ազգային ամբողջութեան մէջ, դադարեն եկեղեցու և դաւանութեան գոյութեան պատճառով միմեանց ատել, միմեանց հալածել.

«Մշակը» առաջ բերեց մեր մինչև այժմ ունեցած վարմունքը, բոլորը վնասակար գտաւ. Նա ցոյց տուեց մեզ ազգային գոյութիւնը պահպանելու համար աւելի տևողական, աւելի հաստատուն հիմունքներ. Բայց գտնվեցան մարդիկ, որ սկսեցին հակառակել, սկսեցին ծուռ ու սխալ բացատրութիւններ տալ.

«Մեղուն»,—«Մշակի» երդուեալ հակառակորդը, նոր և թարմ մտքերի թշնամին, առողջ դատողութեան դահիճը,—աշխատեց սպիտակը սև ցոյց տալ, աշխատեց ճշմարտութիւնը քողարկել. Թէև այդ խաւարասէր լրագրին արհամարհանքը և խօսքին զզուանքը կարող էին աւելի ազդու պատասխան լինել, բայց դժբաղդաբար գտնվեցան պարզամիտներ, որ հետևեցին նրա մոլորութեանը.

«Մեղուն» ասում է. հայոց ազգը լուսաւորչական եկեղեցով միայն կարողացաւ իր գոյութիւնը պահպանել մինչև մեր ժամանակը (որը շատ կարծիքական է) և այսուհետև պէտք է նոյն հիման վրա շարունակէ իր գոյութիւնը. (իսկ երբ որ հիմքը ինքն իրան քանդվում է, ինչ պէտք է արած).

«Մեղուն» առաջ բերելով այլադաւան հայերի դէպի լուսաւորչականները ունեցած փոխադարձ ատելութիւնը և նրանց «հայ» անունից խորշելը, պնդում է, թէ իսկական հայեր միայն նրանք կարող են համարվել, որոնք պատկանում են լուսաւորչական եկեղեցուն, իսկ ով որ դուրս է այդ եկեղեցուց, նրան հայ չէ կարելի կոչել. Եւ այդ մտքով քարոզում է՝ աշխատել, այլադաւան հայերին կրկին իրանց հին եկեղեցու գիրկը վերադարձնել. (իսկ եթէ չը վերադառնան, ինչ պէտք է արած.—«Մեղուի» կարծիքով պէտք է կտրել ազգային ամբողջութիւնից)....

Բայց «Մեղուի» պ. խմբագիրը, որ ատամները սրած լուսաւորչական եկեղեցու ինքնակոչ պաշտպան է հանդիսանում (կարծես, «Մշակը» նրա թշնամին լինի) միթէ չէ հասկանում, որ ինքը, իր նման հազարները և ամբողջ հայ եկեղեցական-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑԻ ՅՕԴՈՒԱԾԸ

Կարծես թէ աշխարհիս մէջ մէկ հատիկ ազգ կայ, որ իր ժամանակակից ու օրուայ խնդիրները թողած, սարեր, ձորեր է ընկնում և իրան համար անմարսելի նիւթ հնարում և ծամում, և դա էլ մենք հայերս ենք. Երբ որ մեր գլուխը ցաւի, մենք գլխացաւի դեղ փնտրելու փոխանակ, կը գնանք ատամներ կը հանենք, և թուաբանութիւն սովորելու տեղ՝ սալոր կը քաղենք. «Փորձ» ամսատետրը այս խօսքին ապացոյց է. Նորա յունիս և յուլիս ամիսների այս օրերս հրատարակված տետրակում տպված է Վահան վարդ. Բաստամեան ստորագրութեամբ մի յօդուած «Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեց. իրաւաբանութեան» վերնագրով, որի շարունակութիւնը խոստացվում է.

Խոստովանում եմ, որ մեծ տհաճութիւնով կարդացի ես այդ գրուածքը, և ինձ համար պարտք եմ համարում թէ ազգին, թէ նոյն իսկ հեղինակ վարդապետին հաշիւ տալ այդ յօդուածի ինձ վրա արած ազդեցութեան համար.—Նիւթը շատ հետաքրքրական է և ժամանակակից. հարիւրաւոր և հազարաւոր աշխարհականներ և հոգևորականներ, կանայք և այրք, աղջիկունք և երիտասարդք հետաքրքրվում են այդ հարցով թէ ամուսնացեալ լինեն, թէ ոչ. տուն չը կայ, ընտանիք չը կայ, ուր այդ հարցը ծանր նշանակութիւն ունեցող տեղ չը բռնէ նրանց հանապազօրեայ կենաց մէջ. Ուրեմն ամեն մարդ մեծ անհամբերութիւնով բաց է անում այդ յօդուածը, որ համալսարանական իրաւաբանական վարդապետի բերանից անաչառ, պարզ և արդար քննադատութիւնների վրա հիմնված վճիռներ լսէ, բայց շատ խաբված դէն է գցում մեծ անբաւականութեամբ.

Նախ՝ որ յօդուածը խղճմտաբար չէ արել իր հետազօտութիւնները, և երկրորդ՝ որ նա չէ մշակում իր նիւթը ամենակողմանի և բոլորովին.

Զարմանալի է, որ հեղինակ վարդապետը գիտէ Ամերիկայի, Պերուի, Նոր-Զէլանդայի, Աւստրալիայի վայրենի ժողովուրդների բազմակնութիւնը, գիտէ, որ զարշելի Ներոնը ամուսնութեան մի զզւելի օրինակը տուաւ և այլն և այլն, բայց մեր հայոցս մասին խօսելիս անգէտ է ձևանում ասելով «տարաբաղդաբար մեզ այժմ յայտնի չէ թէ բազմակնութիւնը հակառակ է եղել (մեզանում) ժողովրդական բարք ու վարքին, թէ արգելված է եղել պետական կամ կրօնական օրէնքով.... Ճշմարիտ է և այն, որ մենք (?) այնչափ քիչ տեղեկութիւն ունենք մեր ժողովրդի ընտանեկան կեանքի մասին, որ պիտի դժուարանանք ասել դրականապէս թէ բազմակնութիւնը կար կամ չը կար հեթանոս հայերի մէջ..... Մեր եկեղեցին չէ արտայայտում իր կանոնադրութիւնների մէջ մի առանձին մաքառումն այդ սովորութեան դէմ. (և) պիտի կարծենք որ բազմակնութիւնը կամ բոլորովին (?) չէ եղել Հայաստանի մէջ քրիստոնէութեան սկզբներում և կամ շատ նուազած է եղել.... Մեր եկեղեցական ժողովների և հայրապետների կանոնների մէջ մի յատուկ կանոն չենք գտնում բազմակնութեան մասին» Ահա այսպիսի կիսակատար ֆրազներ են մեր ուսումնական տիտղոսաւոր վարդապետի խուզարկութիւնները ազգային պատմութեան մէջ, որոնք ոչ սև են, ոչ սպիտակ, ոչ այո են, և ոչ ոչ. Եթէ մի հնատարազ աբեղայ ասէր այդ խօսքերը, կը ներէինք. բայց ինչ ասենք իրաւաբան վարդապետին, ծայրագոյն վարդապետին, որ իր ձեռքին ունի Էջմիածնի հարուստ գրադարանը. Ինչ կախարդական ուժ կայ այդ վեղարի մէջ, որ ով որ գլուխն է անցկացնում, սըկսում է դադարել կատարեալ մարդ լինելուց. Մենք էլ կարծում էինք թէ ուսումնական վարդապետները կը պահեն ինքնուրոյնութիւն, կը գործեն քաջութեամբ և կառաջնորդեն տկարներին և տգէտներին. Բայց երևում է, որ խուցերի այն թմրացուցիչ մթնոլորտը հաւասարապէս ազդում բթացնում է ամեն միտք, թէկուզ Պղատոն ու Արիստոտէլ ինքը լինի.

Այնպէս չէ, ս. հայր, որ «կարծում էք» թէ բազմակնութիւնը Հայաստանում բոլորովին չէ եղել. Մեր մէջ քրիստոնէութեան ժամանակին անգամ եղել է բազմակնութիւն. Մեզ «գրականապէս» ասում է Բիւզանդ պատմագիրը, թէ պարսից Ներսէհ թագաւորը գերի էր արել հայոց Տիրան թագաւորի կիներին. իսկ յունաց Վաղէս թագաւորը հայերի օգնութեամբ գերի առաւ Ներսէհ պարսիկ թագաւորի կանայքը, որ իրար հետ դարձրին, ասելով «յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր (Ներսէհ) զԱրշակ զորդի նորա (Տիրանայ) ի վերայ աշխարհին հայոց, և զկանայս թագաւորին.... դարձ առնէր» Մեր Արշակ թագաւորը առաւ առաջ Փառանձեմին և նա տակաւին ողջ ամուսնացաւ և Ողոմպիի հետ, որ յունաց կայսերական տոհմիցն էր. Բաց ի դմանէ յայտնի է, որ ոչ միայն աշխարհականաց մէջ, այլ նոյն իսկ հոգևորականաց մէջ պատահում էր բազմակնութիւն, այնպէս որ սուրբն Սահակի հռչակաւոր բարեկարգութեան ժամանակին դրած կանոնների մինն էլ դա էր, «զի պառնկորդք և երկկինք մի ելցեն յատեան կղերիկոսութեան». Նոյնպէս էլ Ներսէս կաթողիկոսը Դուին քաղաքում 527 թուին կազմած ժողովում դրած կանոնների մէջ մէկն էլ սա է հաստատել թէ «երկկին պաշտօնեայք որոշեալ կայցեն յեկեղեցական կարգէ, և մի վայելեսցեն ի հասս եկեղեցւոյ»

Ուրեմն ոչ ժողովներն են լռել, ոչ հայրապետները և ոչ պատմութիւնն է «լռում» մեր մէջ տեղի ունեցած բազմակնութեան վրա. այլ վարդապետն է, որ չէ ուսումնասիրել իր նիւթը ըստ արժանւոյն հայացի աղբիւրներից, և աւելի դիւրին է համարել գաղղիերէն հեղինակներին կարդալ և նրանցից ցիտատներ բերել. Սպասենք և տեսնենք երբ պէտք է սկսեն մեր ուսումնականները թողնել ուրիշների պատրաստ «փիրթուշը դկալելը», որ ինքնուրոյն մտնեն մեր պատմութեան խորքերը և մշակեն.